04.03.25 - 04.03.25
16:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ 8-րդ մասնաշենք, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ

Ս.թ. մարտի 4-ին՝ ժամը 16:00-ին, ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում տեղի կունենա «Հավաքական գործողության հիմքում ընկած սոցիալ-հոգեբանական գործընթացները ռեպրեսիվ համատեքստերում» խորագրով դասախոսություն:

Հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի «Հանրային գործընթացների ուսումնասիրություններ» գիտական խումբը կհյուրընկալի «Պատկանելություն, ազդելու կարողություն և քաղաքացիական գործողություն. հետհեղափոխական և (հետ)պատերազմական Հայաստանում քաղաքացիության ըմբռնումը սոցիալ-հոգեբանական հայացքով» գիտական դրամաշնորհային ծրագրի միջազգային համաղեկավար, սոցիալական-քաղաքական հոգեբան, Կոնֆլիկտի և բռնության ուսումնասիրությունների միջառարկայական կենտրոնի (Բիլեֆելդի համալսարան, Գերմանիա) պրոֆեսոր Արին Այանյանին:

Դասախոսությունը նախատեսված է ինչպես ուսանողների, այնպես էլ հոգեբանության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության և հարակից այլ ոլորտների հետազոտողների համար:

Աշխատանքային լեզուն անգլերենն է: Ըստ անհրաժեշտության՝ կիրականացվի հաջորդական թարգմանություն:

Մուտքն ազատ է:

Գրանցումը՝ այստեղ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am